

ՎԱՐՄԻՐ ՀՈՂԸ

Գրասեղանիս վըրայ, սա
 Սկաւառակին մէջ կայ բուռ մ'հող, բերուած հոն
 Հայրենիքի դաշտերէն:
 Նըւէր է ան, զայն ինձ ձօնողը կարծեց
 Սիրտն իր տըրուած, առանց երբեք գիտնալու,
 Թէ կու տար իր պապերունն ալ միասին:
 Չայն կը դիտեմ. մերթ ժամեր
 Բիբերս անոր վըրայ յառած կը մընամ
 Լո՛ւռ եւ թախծո՛տ, իբր այդ հողին մէջ յուռթի
 Նայուածքս արմատ արձակէր:
 Կը մտածեմ. Գուցէ իր գոյնը բոսոր
 Չէ պարգեւած բնութեան ներհուն օրէնքէն.
 Վերքերու սպունգ մ'ըլլալով
 Խըմած է մաս մը կեանքի, մաս մ'արեւու.
 Եւ իբըր տարր անպաշտպան
 Կարմիր հող մ'է եղած, հայ հող մ'ըլլալուն:
 Գուցէ իր մէջ կը բաբախեն տակաւին
 Դարերը հին հին փառքին,
 Կայծն ամրակուռ սըմբակներու որոնց գոռ
 Արշաւանքն օր մը ծածկեց
 Հայկեան վաշտերն յաղթութեան տաք փոշիով:
 Կ'ըսեմ.- Իր մէջ դեռ կ'ապրի
 Ինքնատիպ ուժն այն որ կազմեց շունչ առ շունչ,
 Կեանքս իմ, քու կեանքդ, ու տըլաւ,
 Կարծես ձեռքով գիտակից,
 Նոյն թուիս աչուին նոյն եւ նըման հոգիով
 Կիրք մ'Եփրատէն առնըւած,
 Սիրտ մը կամշոտ, թագըստոց